

Զմիւռնիոյ առաջնորդ Սահակ Ահաբնի եւ Սարգսի մէջ, եւ մէջերնին եղած միաբանութեան համեմատ գրքին ճակատը դրուած էր՝ թէ Սահակայ ծախիւք տպուած է. սակայն ինչպէս Նուրտինեան Վ. կը գրէ, Սահակ այս գրամն հատուցած չէ Սարգսի: Լիվոնոյի հայ Եկեղեցւոյ դիւանին մէջ կը գտնուի Սահակայ իսկագիր եւ կնքեալ մէկ գրութիւնն այս մասին, գրուած «ԹՎին ՌՃՂԹ» (= 1750) յունիսի մուտն յաւուր ուրբաթու եւ իսուրբ Լուսաւորչի Եկեղեցւոյ խցումն»: Այս նամակն՝ որ ուրիշի մը գրուած կ'երեւայ եւ ոչ ուղղակի Սարգսի, կ'երեւայ թէ սկիզբէն պակաս է. ասոր մէջ Սահակ կ'առաջարկէ որ հազար օրինակ կազմուած իրեն տրուի, եւ փոխարէն վճարէ հատին 3 զր. իսկ իր տեղն եթէ յանձնուի՝ հատին 5 զր.: Ինքը հատը պիտի ծախէ 10 զր.ի, եւ սակայն կը պահանջէ որ գրքին վրայ դրուի՝ թէ ամբողջն իր ծախիւք տպուած է. ասկէ ահա կուիւր: Այս նամակը կը հրատարակենք նոյնութեամբ:

Եթէ Վէնէտիկ տեղն կու վաճառէ հազար հատն երեք հազար ղուշի ինձ ղապուլ է հազր փողն նազտ տեղս պէ ղուսուր թէսլիմ՝ անեմ՝ եթէ աստ ի տեղս կու վաճառէ հազար հատն հինկ հազար ղուշի փէշին նազտ փողով կառնեմ՝ այսու պայմանաւ, որ հինկ հարիւր հատն սեւ սաղրի կապով նման մաթէոսի մեկնութեան կապովն լիցի. եւ հինկ հարիւր հատն այլ վարաղի կապով լիցի. եւ եթէ վերոյգրեցելոյս կերպն իւրն օգուտ եւ հաճոյ իցէ, նա ինձ եւս է հաճոյ գլխովին եւ եթէ վերոյգրեցեալքս իւրն չէ հաճոյ եւ օգուտ, նա ինձ